ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/27 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ
(Մեդալներ և մեդալների տուփեր)

ք. Երևան

26 ապրիլի 2019թ.
Ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ գնահատման պատասխանատու
Արեն Մեսրոպյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման պատասխանատու.
Անդամներ՝ ԳՊ/ԳԱ գնահատող անձնակազմ
Արթուր Շահինյան՝ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ.
Գարիկ Բոյաջյան՝ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի պետ.
Անդամներ՝ ԳՊ/ԲԱ – բացող անձնակազմ
Գոհար Մեսրոպյան՝ ֆինանսատնտեսագիտական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ.
Հայկ Ծատուրյան՝ ԱԻՆ իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ.
Հանձնաժողովի քարտուղար՝
Արմինե Գալուստյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ.

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ հարցում է ուղարկվել «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

1.2 Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցները ծանուցվել են՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագրեր/:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Կարգով սահմանված ժամկետում՝ Կոմիտեից ստացվել է եզրակացություն /կցվում է/:

2.2 Սույն արձանագրության 1.2 կետով պահանջվող փաստաթղթերը մասնակիցների կողմից ներկայացվել են սահմանված ժամկետում և համապատասխանում են հրավերի պահանջներին:

3. ***Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.***

3.1 Ընտրված մասնակիցներ ճանաչել.
ա) ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ 1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ՝ 1,2,3,4,5,7,8,9 չափաբաժիններով
բ) «ԱՏԱ» ՍՊԸ՝ 6-րդ չափաբաժնով,

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

3.2 Հաստատել ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/15 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա. Մեսրոպյան

անդամներ՝ _____ Ա. Շահինյան

_____ Գ. Բոյաջյան

_____ Գ. Մեսրոպյան

_____ Հ. Ծատուրյան

քարտուղար՝ _____ Ա. Գալուստյան